«ԱՂԲԻՒՐ»-Ի ՅՈԲԵԼԵԱՆ

Ինչպէս արդէն յայտարարել էինք, այս տարի աշնանը Թիֆլիսում կատարուելու է «ԱՂԲԻՒՐ» մանկական ամսագրի 25-ամեայ յոբելեանը, որի համար ընտրուած է յատուկ յանձնաժողով բաղկացած հետեւեալ անձերից՝ իշխանուհի Արղութեան-Երկայնաբազուկ Սոֆիա, տ. տ. Առաստամեան Հեղինէ, Սպենդիարեան Յուլիանէ, պ. պ. Բաշինջաղեան Գէորգ, Բարխուդարեան Գէորգ, Մելիք Ազարեան Ալէքսանդր, Յարութիւնեան Իսահակ, բժիշկ. Նաւասարդեան Բագրատ, Նար-Դոս, բժիշկ. Շխեան Արտաշէս, Սպենդիարեան Յովհաննէս, Սոլովեան Յովակիմ եւ Քալանթար Ալէքսանդր:

Մեր ազգի վերածնութեան գործում նորաբողբոջ սերնդի պատշաճաւոր կրթութիւնն այն միակ յենարանն է, որի վրայ հանգիստ սրտով կարող ենք դնել մեր բոլոր յոյսերը։ Ցայտնի է, թէ յատկապէս մանկական աշխարհին նուիրուած մի ամսագիր որ աստիճան բարձր ու վսեմ կոչում ունի կրթութեան ասպարէզում։ «ԱՂԲԻՒՐ»-ը 25 տարի ծառայել է այդ կոչմանն ամենայն հաւատարմութեամբ, և մեր փոքրիկ ազգը կատարելով մեր այդ անդրանիկ և երկար տարիներ նաև եզակի մանկական թերթի քառորդ-դարեան յոբելեանը՝ կատարած պիտի լինի իր իսկ կուլտուրականութեան զօրաւոր ֆակտորներից մէկի տօնը։ Ցայտարարելով այս մասին ի գիտութիւն ընդհանրութեան, յանձնաժողովս կոչ է անում ամեն մի հայաբնակ քաղաքի հասարակութեան՝ կազմել ձեռնհաս անձերից տեղական մասնաժողովներ՝ ըստ պատշաճին մասնակցելու յոբելեանին։ Յանձնաժողովիս գլխաւոր նպատակն է յոբելեանի առթիւ կազմել մի ֆոնդ՝ ապահովելու համար «ԱՂԲԻՒՐ»-ի հրատարակութիւնը։ Յոբելեանը որ օրը կատարուելու մասին կը յայտարարուի առանձին։

Յանձնաժողովի նախագահ՝ Բժիշկ. Բ. Նաւասարդեան

Քարտուղարներ { Բժիշկ Ա. Շխեան
Նար-Դոս

Ծանօթ.—Յանձնաժողովիս հետ յարաբերութիւն ունենալու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով՝ ТИФЛИСЪ Д-ру Баграту Абраамовичу Навасардіану, директору первой ч. лѣчебницы.